

կացութիւնը ճիշտ է, որ առաջին դարում  
Ք. յ. Մուրացան նախարարութիւնը գոյու-  
թիւն չուներ: Բայց այդ ի՞նչ կապ ունի մի  
վեպի հետ: որի մէջ ոչ թէ Մուրացաններ են  
դառլս գովիտ, այլ վիշապներ և վիշապազունք:  
Սակայն մի բողէ ընդունենք, որ ոչ թէ Խո-  
րենացու մեկնութեամբ, այլ նոյն խոկ վիշա-  
պանքի մէջ վիշապազունք են զարմք Աժդա-  
շակայ=Մալք=Մարացոցն տեսլք=Մու-  
րացանք<sup>1</sup>: Բայց միթէ Մուրացանների գոյու-  
թիւն չունենալին առաջին դարում Ք. յ. կա-  
րող է ապացոյց լինել որ Խորենացու ժամա-  
նակի (Ը—Թ դար), ըստ պ. Խալաթեանի, երբ  
կային Մուրացանները և շատ լաւ յայտնի  
էին) ժողովրդական վեպի մէջ Մուրացան ա-  
ռունը յիշուած շինի և կապուած մի Ար-  
տաշէս թագուարի անուան հիւս: Միթէ այդ  
անաքրոնիզմը կարելի է իրրե փաստ ծառա-  
յացնել վեպի գոյութիւնը հերքելու համար:

«Վէպերից (նելուա) ոչ մէկի հիմնական  
իմաստի մասին» գեում է Բուլայես, պարզ  
զարաֆար կազմել չե կարող նայ որ ամենայն  
պարզութեամբ չե իւրացրել այն միտքը թէ  
ժողովրդական վեպը, դարերի ընթացքում  
ապելով սերունդների բերանին, հասնում է  
մեղ լցուած ամենակոպիտ եւ օտարուի, ի-  
րաք հակասող անաքրոնիզմներով: Խորաքան-  
չիւր սերունդ՝ որ իւր նախորդներից սահ-  
նում է վիպական աւանդութիւնը անոր մէջ  
մոցնում է իւր ժամանակի ակնարկներ (Ա-  
մեր), երբեմն և ամրող մէջագէպեր: Մի  
ուրիշ տեղ նոյն հեղինակը զրում է: «Ժողո-  
վրդական վեպը երբեմն միենայն անձի մէջ  
խառնում է զանազան ժամանակների և զա-  
նազան բնաւորութեան գծերը և՝ մի աստու-  
ծու, և՝ ա Գրքի կամ որեւէ սրբի, և՝ որեւէ  
տիտանի, և պատմական անձի: այն էլ որոշ  
ապական, պարագայի մէջ»:

Այսպէս և մեր վիպասնքի մէջ Արտաշէս թագաւորի պատմութեանը կապուած է ոչ միայն զանազան ժամանակների և անձերի բուն պատմական և կինդադական գծեր

1. *Wkñf* յիսոյ կրտեսնելիքի խսկապիս Մարի կե կղել պատճառ, որ Արտաշեսի պատմական երգերին կցուեկ վիշտաբների առասպելու;

այլ և բուն առասպելական հատուածներ։  
Մէկ Արտաւազի կոփէ Ազատ Մասիսի վի-  
շապների կամ վիշապազանց չեա, մէկ էլ վի-  
շապ Արտաւազի փակուելլ Ազատ Մասի-  
սում։

Որոշենք այդ առասպելական մասերը՝  
նախ՝ ինչ որ վերաբերումէ վիշապներին և վի-  
շապագանց, և ապա Արտաւազդի առասպելը:

(*lip zuurni lūmīnī*)

Մ. Արեգակնալի.



ՀԱՅԵԳԻՑԱԿԱՆ ՏԵՂԱԿԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ


Անցեալ տարրուայ Մ'արտ ամսին թերլի-  
նում երածշտական մի նշանաւոր ընկերու-  
թիւն կազմուեցաւ՝ Մ'իջազգային երաժշտա-  
կան ընկերութիւն անունով։ Տարին շրոլո-  
րած արդէն նոյն ընկերութեան ձիւղեր են  
բացուել Լայպցիգ, Կոպենհագէն, Փրանքիֆուրտ  
և Պիտտի առաջարկութիւնն է։ Այս ընկերութեան նպատակն է, խնդչս ա-  
նունն էլ ցոյց և տալիս մշակել ընդհանուր  
ազգերի երաժշտութիւնը։ Ընկերութիւնը  
զիանական մի թերթ է հիմնել—Zeitschrift  
der Internationalen Musikgesellschaft անունով,  
որի հետ հրատարակում է նոյնպէս այլ և այլ  
ազգերի պատկանող հեղինակների երաժը-  
տական յօդուածների մի ժողովածու—Sam-  
melbände der Internationalen Musikgesellschaft  
վերնագրով։ Մ'ենք ստացել ենք երկու հրա-  
տարակութիւնների առաջին տետրակը, եր-  
կումն էլ մեզ համար հետաքրքրական նորա-  
նով։ Որ առաջնի մէջ տեղիկութիւն է հա-  
զարդուած մեր սկրեբի միարանակից Տ. Կո-  
միտոս վարդապետի մի դասախոսութեան  
մասին իսկ երկրորդի մէջ տպուած է նոյն  
դասախոսութեան առաջին հատուածը։ Տե-  
Արmenische Kirchenmusik վերնագրով։

Հ. Կոմիտասը իւր դասախոսութիւնը  
կարգացել է անցեալ մայիսի 10-ին և յու-  
նիսի 14-ին Zeitsch. d. I. M. թերթից քա-  
ղում եւք այդ դասախոսութեան հոմանա  
բովանդակութիւնը:

Հայոց եկեղ. երաժշտութիւնը քրիստունեան մեանքան սկզբից մինչև այժմ նոյն հիմքն է ունեցել: Սա ծագում է հեթանոսական մեհենական երգեցողութիւնից: իսկ վերջինս ժողովրդականից: Եկեղեցական և ժողովրդական երաժշտութեան հիմքերի նոյնութիւնը հաստատում է եղանակների բազմապիսի վերըութութեամբ: Տարրերութիւնն այն է, որ եկեղեցականը զարգարուած է գեղգեղանքներով: այն ինչ ժողովրդականը պարզ է և անպաճոյն: Պարսից, Արաբացւոց և Յունաց երաժշտութեան աղղեցութիւնն արտաքին է միայն Քրիստ. Հանգոյն երաժշտութեան ուսումնասիրութեան համար ուշադրութեան արժանի է այս ինքնուրայնութիւնը: Հայոց երաժշտութեան հիմունքը քառալարն է (Tetrachord), որի առաջին և վերջին ձայներն անփոփոխ են մնում, իսկ միջին երկուը վեց տիսակ փոփոխութիւն ստանում: Քառալարերը միշտ միացած են: Եղանակներն ութնեն: չորսը բուն ձայն (աճ. բճ. գճ. գճ.) և չորսը կողմ (ակ. բկ. գկ. գկ.): սոցանից իւրաքանչիւրն ունի իւր յատուկ քառալարը: Եկեղեցական երգեցողութիւնից աւելի հետաքրքրական է սաղմոներզութիւնը (Psalmodie): \* Հայերը առողջանութեան եօթ տիսակ նշան ունին որոշ ձայնասահմաններով: որ ուրիշ յայտնի առօգանութեանց համեմատութեամբ հարուստ է: Ժողովրդական երաժշտութիւնը գեր ևս կենցանի է ամեն աելի ուր օտար քաղաքակրթութիւնը աղղեցիկ չէ դարձել Ժողովրդական երգի նիւթը, ինչպէս ամենուրեք: կազմում են պատմական գէաքերը բնութեան երեսութիւնները անձնական վիշտը: ուրախութիւն են: Բանասահղութիւնը վանկաւոր է և լի բառախաղութեամբ: Դործածական են հակիրճ և զօրեղ համատութիւնները: Բառերի և մարերի շեշտերը համապատասխան են երաժշտական շեշտերին: Հայոց երգեցողութեան ոճը մի առանձին ինքնուրոյնութիւնը ունի՝ պարսից, արաբացւոց, քրիստութեամբ առաջիների եղանակների համեմատութեամբ:

Ժողովրդական զուսանները յայտնի են պատմութիւնից, որոնց երգերի հետքերը մնացի են Խորենացու և ուրիշ մատենագիրների մէջ:

Գ. Ա. Յովուկինան



## ԱՅԼԵԿԱՅԼԻ

ԱՅԼԵԿԱՅԼԻ ՎԻՃԵԼԻՔՆԵՐ  
ԴՐ. Կ. ՌԵՆԿԱՄՐԻ.

Բ.

Մ Ե Գ Ո Ւ Ր Ո Ւ Թ

Օպք շրջապատում է Երկիրն ամէն կողմից: մենք օդ ենք ներշնչում մեր կեանքի սկզբից մինչև վերջը, մեր առաջին շնչից մինչև վերջինը: Ուտում ու խմանմ ենք մենք օրական միայն 3—5 անգամ, իսկ օդը մենք ներշնչում ենք մեր պէտում 12—15 անգամ, մի ժամում միշտին թուով մինչեւ 1.000 անգամ կամ օր ու գեշեր 20.000—25.000 անգամ, իսկ տեսակի միշտոցին աւելի էլ շուտ շուտ: Պատահէլ է որ մարդկեր մի քանի օր մնացել են առանց ուտելիքի ու խմելիքի: բայց ոչ մի մարդ առանց օդի չի կարող ասլրել նոյն իսկ հինգ րոպէ: Լաւ օքը մեզ համար աւելի կարելո և անհրաժեշտ պահանջ է, քան կերակրել կանոնաւոր ընտրութիւնը, բայց գժրախտաբար բազմամարդ քաղաքներում աւելի գժուար է թարմ օդ գանելը, քան ամենաթանգ ուտելիքներ ու խմելքներ:

Մքնուրափ օքը, որ շրջապատում է մեզ, երկու դաղի միացումն է և բաղկացած է 4 մաս ազստից և 1 մաս թթուածինց (աւելի ճիշճ՝ 79 մաս ազստ և 21 մաս թթուածին): Ազոտը ոչ մի աղղեցութիւն շունի մեզ վրայ, ոչ էլ նիւթերի փոխանակութեան վրայ: ոչ ներշնչելիս և ոչ արտաշնչելիս նա չէ ներգործում բնաւ արեան վրայ: ուստի և մեզ համար չեղոք գաղ է: Թթուածինն, ընդհակառակը, անպայման անհրաժեշտ է մեր գոյութեան և նիւթերի փոխանակութեան գործողութեան համար: Միայն ազուաց բաղկացած և թթուածին չպարունակող օդում մենք շուառը կեղպուում ենք:

Մեր ներշնչած թթուածինը թոքերից անցնում է արեան և արեանագնահամերի մէջ: Եյստեղ թթուածինը միանում է ածխածնի հետ, որ

\* Այս խնդրին է վերաբերում հ. Կամիսասի յաղուածի առաջին հատուածը: որ առաջին և եղին ընկերութեամբ ժարուածնի առաջին դրդի մէջ: